



DEFENSE COUNCIL OF WESTERN ARMENIA
Արեւմտեան Հայաստանի Պաշտպանութեան Խորհուրդ

www.western-armenia.org

email: westernarmenia@gmail.com

Սեպտ. 21, 2009

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու իրերայաջորդ վարչակարգերը Հայոց Յեղասպանութեան ճանաչման ամերիկահայութեան պահանջը «հայութեան համար» անսպասելի շրջադարձ ունեցաւ: Պետական քարտուղարութիւնը հայ-թրքական արեհեստածին բարեկամութիւն կը հրահրէ եւ կը պարտադրէ:

Հայաստանին կ'ըստիպէն դիւանագիտական յարաբերութիւններուն մէջ մտնալ Թուրքիոյ հետ, որը յաղթութեամբ դուրս եկած է բոլոր դիւանագիտական ճակատումներէն:

Թուրքիան օգտուելով պատեհութենէն կը փորձէ ոչ միայն խուսափիլ կատարած Յեղասպանութեան պատասխանատուութենէն, այլ եւ բացասել ԱՄՆ-ի Նախագահ Ուորո Ուիլսընի 1920 թուականի Նոյեմբեր 22-ի վճռագրի գործադրութիւնը, վերջնականապէս զրկելու արեւմտահայութիւնը Հայրենիք վերադառնալու հնարաւորութենէն:

Աշխարհի խաղաղութեան, «Արեւելեան» Հայաստանի անվտանգութեան եւ Արեւմտահայութեան շահերը կը պահանջէն, որ այս պահուն, անմիջապէս առկախուին հայ-թրքական բանակցութիւնները:

Բանակցութիւնները շարունակելու պարագային, «Արեւելեան» Հայաստանի Հանրապետութիւնը, պարտի ունենալ իմաստութիւնը եւ դիւանագիտական խոհեմութիւնն ու ճարպիկութիւնը խօսելու իրաւատիրոջ հանգամանքէն, հետապնդելով ոչ թէ միայն Յեղասպանութեան ճանաչումը, այլ եւ կողքին կանգնելով Արեւմտահայութեան եւ Արեւմտեան Հայաստանի պաշտպանութեան խորհուրդին, եւ բոլորիս հետ միասնաբար պահանջելու ԱՄՆ-ի Նախագահ Ուորո Ուիլսընի իրաւարար վճռագրի իրագործումը Վանի, Պիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի մէջ:

Խրիմեան Հայրիկի, Եկարեանի թէ Գէւորգ Չաուշի լեռնաշխարհը, Սարգսեանի թէ Նալպանտեանի քմահաճույքին չէն յանձնուած, իսկ եթէ պարտուողական օրէն, պարտադրուած ճնշումներուն ենթարկուին, եւ ծայրահեղ պարագաներ առաջացնէն, ապա թէ մենք՝ Արեւմտեան Հայաստանի տարագիր ժողովուրդի՝ անտուն մնացած ժողանգորդներս, մեր նախնիկներէն ժառանգած ենք, ”ծայրահեղ պարագաներուն ծայրահեղ որոշումներով հակադարձել:”

Արեւմտեան Հայաստանի Պաշտպանութեան Խորհուրդ
Կլէմտէլլ - Քալիֆորնիա